ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

30.05.2018թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/2-1» ծածկագրով գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան

<<08>> օգոստոս 2018թ

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 30.05.2018թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/2-1» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը **որոշեցին**

1.1 Պայմանագրի 4.1 կետով սահմանված <4300000 (չորս միլիոն երեք հարյուր հազար)> բառերը և N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի <4300000> բառերը փոխարինել համապատասխանաբար <4700000 (չորս միլիոն յոթ հարյուր հազար)> և <4700000> բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝

Գնումների համակարգողները որոկավորումը ստանալու տարվան հաջորդող յուրաքանչյուր երրորդ տարում պարտադիր պետք է անցնեն վերապատրաստում՝ համաձայն ՀՀ կառավարության 29.06.2017թ-ի N 759-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի պահանջի: Վերապատրաստման դասընթացի նպատակն է ապահովել նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական և հետևողական կատարելագործումը:

Դասընթացի ընդհանուր տևողությունը կազմում է 12 ժամ:

Վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են ընդամենը 45 որակավորված մասնագետների համար, որոնք ընդգրկված են 2 խմբերում (Ցանկը կցվում է):

Դասընթացները անցկացվելու են աշխատանքային օրերին՝ ք.Երևանում:

Դասընթացների անցկացման տարածքը պետք է համալրված լինի դասավանդման համար անհրաժեշտ գույքով և տեխնիկայով (համակարգիչ, պրոյեկտոր, սլայդերի ցուցադրման համար էկրան, գրատախտակ):

Կատարողի կողմից մատուցվող ծառայությունը ներառում է նաև վերապատրաստվող անձանց համար օրական 2 անգամ սուրճի ընդմիջումների ապահովումը:

Կազմակերպվելիք դասընթացների ժամանակացույցը և յուրաքանչյուր խմբում ընգրկվելիք մասնակիցների տվյալները տրամադրում է պատվիրատուն: Ընդ որում՝ Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով Կատարողին՝

- դասընթացների ժամանակացույցը տրամադրում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում.
- յուրաքանչյուր խմբում ընդգրկվելիք մասնակիցների ցանկը (անուն, ազգանունը, հանրային հատվածի կազմակերպության անվանումը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փստի հասցեն) տրամադրում է դասընթացը սկսելուն նախորդող մինչև երրորդ աշխատանքային օրը:

Մինչև դասընթացի անցկացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա մինչև ժամը 17:00-ն Կատարողը էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուին է տրամադրում

տվյալ օրվա հաճախումների վերաբերյալ մասնակիցների կողմից ստորագրված փաստաթղթի բնօրինակի սկանավորված տարբերակը: Ընդ որում՝ Կատարողը դասընթացի անցկացման յուրաքանչյուր օր ապահովում է, որ դասընթացին ներկա մասնակիցները ստորագրեն այդ փաստաթուղթը յուրաքանչյուր օրվա առավոտյան և ավարտին՝ պարտադիր նշելով ժամը: Փաստաթուղթը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը. հանրային հատվածի կազմակերպության անվանումը, մասնակցի անունը, ազգանունը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

Դասընթացների ավարտման օրը մասնակիցներին տրամադրվում են հարցաթերթիկներ հետևյալ բովանդակությամբ. դասավանդման որակ, թեմայի մատուցման ձև, դասընթացի կազմակերպման աշխատանքներ և այլնի գնահատում: Հարցաթերթիկը ձևը կազմում է Կատարողը՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Հարցաթերթիկները հանձնվում են Պատվիրատուին յուրաքանչյուր խմբի դասընթացի ավարտից եռօրյա ժամկետում:

ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օր I

Թեմա 1 - Օրենսդրական փոփոխություններ գնումների համակարգում (1 ժամ)

Թեմա 2 - Գնման գործընթացը, պատասխանատուները, գնումների նախապատրաստումը (1 ժամ)

Թեմա 3 - Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները (1 ժամ)

Թեմա 4 - Գնման ձևերը (1 ժամ)

Թեմա 5 - Գնման ձևերի (մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնում) կիրառման պայմանները

(1 ժամ)

Թեմա 6 - Պայմանագրի կառավարում և կատարում (1 ժամ)

Օր II

Թեմա 1 - Գործնական օրինակով գնումների պլանի կազմում, փոփոխությունների կատարում, հրապարակում, գնման հայտի հաստատում (1,5 ժամ)

Թեմա 2 - Գործնական օրինակով՝ թղթային եղանակով գնման ընթացակարգի (մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնումներ) հայտարարում, հրավերում փոփոխությունների կատարում, պարզաբանումների տրամադրում, հայտերի բացում և գնահատում, ընտրված մասնակցի որոշում, պայմանագիր կնքելու հայտարարության կազմում, պայմանագրի շնորհում, կնքված պայմանագրի հայտարարության կազմում (3 ժամ).

Թեմա 3 - Գործնական օրինակով պայմանագրի կառավարման և կատարման գործընթացի կազմակերպում (1,5 ժամ)

Ցանկ

N	Խմբեր	Խմբերում ներգրավված անձանց քանակ	Դասընթացի անցկացման վայրը և ժամանակացույցը	
	Թղթային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողների խմբեր			
1	Խումբ 11	22	ք. Երևան, 2018թ. սեպտեմբերի 17-18	սկիզբը 10.00-ին
2	Խումբ 12	23	ք. Երևան, 2018թ. սեպտեմբերի 19-20	

1.3 Պայմանագրի վճարման ժամանակացույցը խմբագրել համաձայն կից հավելվածի /կցվում է/:

2. Այլ պայմաններ

2.1. 30.05.2018թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/2-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017325
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար

_____ Կ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Սարմենի փող., 1 շենք,
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008180909
ՀՎՀՀ 01571846
Տնօրեն

_____ Ա. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
30.05.2018թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-18/2-1» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<< 08 >> օգոստոս 2018թ կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79631200/6	Գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների ծառայություններ					645000	1290000	1935000	2580000	3525000	4230000	4700000	4700000	4700000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017325
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար
_____ Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Մաստեր Սթայլ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Սարմենի փող., 1 շենք,
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008180909
ՀՎՀՀ 01571846
Տնօրեն
_____ Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ